

5710

07  
6-93

1824



3  
07  
Հ-98  
Ն Ա Ր Գ Ա Ր  
Հ-93-Ն Ա Ր Ֆ Ի Ի  
381

### ԵՐԿՐԻ ԽՈՍՔ.

Ա. ԻԲՐԵԿ ՑԱՌԱՋԱԲԱՆ



30802  
Q/1701-58

Չոմ գիտեք ինձը պահան է թէ սիրտը թոյնի թառ է Սըրտին ուզածը որ միշտ կ'առէ Սըրտին չուզածը Թող լստէ գրականության ու արվեստի մասնաւության համար ու դժուարի վճիբացօք բարզությունը են մարդու գրականութիւնը, մոռաւորապէս նշարքերական գրականութիւնը մարդկարին ընկերութեանց գլխաւոր գործակատարներից (facteur) ամենավուժու է և նորա հոչումը նուիրական է: Այդ կումութիւնն ու նուիրականութիւնը առաւելքաջ յայտնի պէտք է լինէր նոյն իսկ պարբերուկան հրատարակութեանց խմբագրապետներին, որոնք յանձն են առնում վարժէ արքայի ծանր պաշտօններ: Լրագրական թերթը մի երկանութիւնք է, որ հասարակութիւնք տալիս են նոյն ձեռքը: Լրագրապետի սուրբ պարտականութիւնն է ազնուաբար գործ ածել այդ զէնքը:

Գուցէ ինձ ասեն՝ «ալդ ամենը ես մանկութիւնից գիտեմ. դու ասա, ուրիշ ինչ պէտք է անեմ»: Ես կ'ասէի որ միայն գիտենալը բաւական չէ. «Նա միայն մեծ կը կոչուի, ով գիտէ և անում է». մանաւանդ թէ «Ով անում է և այնպէս է ուսուցանում մարդկանց»: — Դա մեծ իրաւունք է, որ հասարակութիւնք շնորհում են խմբագրութեանց: Սակայն այդ իրաւանց ի չարը գործ դնելն էլ նոյնչափ ստոր ու եպերելի է, որչափ վսեմ ու սրբազան է նոյն ինքն իրաւունքը:

Յիրաւի, ինչ կ'ասէք մի թերթի խմբագրութեան, կամ առաւել ուղղով ասելով, մի խմբագրապետի, որ իւր թերթը ազգի բերան յայտարարելով, չէ քաշւում նորան իւր անձնական բերան շինելուց: Այդ միայն նշանակում է «գոգումը նստել, մօրուքը քաղել»: Ցաւալի և նողկալի չէ արդեօք մի ալդպիսի վարմունքնոցակողմից, որոնքի պաշտօնէ հրաւիրուած են մաքրել հասարակութիւնքը ամենատեսակ ախտերից: Այդպիսիք պէտք է քաջ գիտենան, որ գորանով մեծ վնաս են հասցնում ոչ այնչափ իրանց, որչափ այն հասարակութեանցը, որոնց ուղեցոյց ու ղեկավար լինելու պարտականութիւնն են յանձն առել. և ոչ միայն ուղղակի, իսկոյնեւթ կատարուող շօշափելի վնասներ են հասցնում, այլև անուղղակի, ապագայում կատարուելիք վնասներ, զրկելով նոցա՝ յառաջադիմելու միջոցներից ամենամեծից — նոյն թերթից իսկ: Բայց զրկուիլ մի այնպիսի պարբերական թերթից, որ ապարդիւն չի կարող համարուիլ. որ, որչափ ևիցէ, մի ժառարութիւն մատուցանում է ազգին, — դա չնչին կորուստ չէ, թէպէտե կորցնողը զգալիս չլինէր ալդ:

Այս խորհրդածութիւնքը ինձ անել է տալիս «Նորիար» լրագերը: — Մեր պարբերական հրատարակութեանց ինչ պարմանների մէջ ապրելը և ինչ մթնոլորտով շրջապատուած լինելը և նկատի ունենալով, ինձ ի սկզբանէ անտի անհա-

կանալի էր մի նոր լրագրի գոյութիւնը մեզանում. որովհետեւ արդէն ունեցածներս հաստատ հողի վերայ չէին կանգնած, զուրկ լինելով պարտուապատշաճ ապահովութիւնից: Ինչ վերաբերում է նոր լրագրէ ունենալիք ուղղութեանը, պէտք է ասել որ ալդ կետից էլ նորա աշխարհ գալը բաւական անսպասելի էր, որովհետեւ եղածները արդէն երկու հակառակ ուղղութեանց ներկայացուցիչք կարող էին համարուիլ: Եւ այդպէս էլ եղաւ: Նոր իսկապէս ոչինչ չտուեց նոր լրագիրը. նա միայն եղաւ մի նոր շտեմարան, որի մէջ նոյնպէս կարող էին նիւթեր համբարուիլ:

Զերկարացնելով խօսքս այս առաձգական հարցի մասին, պէտք է ասեմ, որ ալդ նոր լրագրի խմբագրապետի նախկին համբարը մի կողմից, — որի կեղծ լինելը «իմաստուն մարգարէներից իմաստնագունին և ամէն բան արձանագրող ժամանակին» է մնում արձանագրել (տես՝ «Մեղուի» № 87 ներկալ 1884 թ.) իւր տիեզերածաւալ մատենի մէջ, ինչպէս ասում է Հակաբարի Մովսէս-Խորենացին, և իւր սրտի ու զածի պէս աջ ու ձախ մտրակելու փափագը միւս կողմից պ. Սպանդար Սպանդարեանցին «Փառաց ի փառս բարձրացըրին» — աշխատակցութիւնից ի խմբագրապետութիւն, հասարակութեանց հայոց ի սպասաւորութիւն:

Ինձ կարող են ասել, թէ մեր խմբագրապետներից որը հարկաւոր գէպքում իւր թերթը իւր եւ-ին չէ ծառակեցնում. որը չէ իցում իւր ականջները, ճշմարտութիւնը չլսելու համար, երբ այդ ձեռնտու չէ իրան. որը չէ շոյում ու շողոքորթում իրան գիմողին, երբ այդ ձեռնտու է իրան: (Թող ներեն ինձ ճշմարտութեան և անհառութեան ջատագով խմբագրութիւնք):

Սակայն, թող գիտենան ալդպէս մտածողները, որ ամէն բանի մէջ էլ չափ ու սահման կար. և եղած խմբագրու-

թեանց մէջ իրանց կըքերը զսպող և չափաւորութեան սահմանից դուրս չգնացողներ էլ կան: Այն ինչ նոր Դարը, այդ կետից առանելով, մի բացառութիւն է ներկարացնում: Ահա իսկապէս ինչի մէջ է կայանում նորա Նորութիւնը:

Եւ այդ էր պատճառը, որ ես ցանկանալով հանդերձ պ. Սպանդարեանցին խմբազրապետ տեսնել, ուզում էի նորան մի սովորական աշխատակից տեսնել: Ոյն ժամանակն էլ, հիմա էլ ես ցանկանում էի և ցանկանում եմ պ. Սպանդարեանցին մի ինամակալի հովանաւորութեան ներքոյ տեսնել, որքան և նորան անախորժ լինէր այդ վիճակը: Երկու ցենզուրալ ես միշտ անհրաժեշտ եմ համարում պ. Սպանդարեանցին և նժան մարդկանց համար, որքան և անհաճոյ թուէր նորան և ընկերութեանցը իմ այս ինքնագլուխ, տարօրինակ, գուցէ և համարձակ որոշում:

Թող չկարծէ պ. Սպանդարեանցը թէ ես իրան թշնամի եմ, ոչ, ես մինչև օրս նորան առաւել բարեկամ եմ եղած քան հակառակորդ. և երբէք տեղիք չեմ ունեցած նորան առողջ լինելու: Ի՞ո միոյն կարող եմ նորա դաշտավարների արտայալտութեանց ձեւի և բռնած ընթացքի հակառակորդ լինել: թէ պէտք ինձովիսի հոկառակորդները ճանճեր երւային նորին մեծապատռութեան առաջը: Անձի թշնամի լինելը մտքովգա անզամ չի կարող անցնել:

Յումով եմ, որ պ. Սպանդարեանցը ոտանտիրտ կերպով կընդունի իմ այս խօսքերը. և խմբագրական ոլիմպասից ջանմանը չի արձակի իմ դէմ, համոզուած լինելով կանխադդին, որ այդ շահթերը օգալին բաղադրութիւն ունենալով, «կը դառնան ի յօդ, ուստի ստեղծանելոց են»: «Ճի երեկ և այսօր՝ նոյն և լաւիտեան»: Էհ, ես էլ ինչ եմ առում: Կա որ ինձակաների առաջին ուշք դարձնի, և ըստ կերթարքի քարի վերաբարձր կանգնի: Սակայն այս բոլորը իբրև լառագան:

## Բ. «ՆՈՐ ԴԱՐԻ»

Մ ի յ ա ր ձ ա կ մ ու ն ք ը

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՄՐԲԱԶԱՆՑ

Արևոտակէս սըբազանի բարի համբաւը երանեց շուտ է մեզ հասել: Որ կողմը որ շուռ ենք գալիս՝ միմիայն լաւն ենք լսում նոր առաջնորդի մասնեն<sup>1)</sup>: զարմանալի չէ, այն էլ մեր ժամանակներում: Մի՛ գրեթէ երիտասարդ եպիսկոպոս, հասկացող և կարդացած հոգեորական, ծանօթ և բոպահան լեզունելի հետ, բարեկամ գիտութեան և լուսաւորութեան, մի եռանկոտ և գուծունեայ անձն և մի ժողովուգի մարդ—ահա Արևոտակէս հայուկուպոս: այսպէս են ամենքը նոր մասին խօսում<sup>2)</sup>: Աւելի լինչ ենք կամենում կամ լինչ կարող ենք պահանջել: Մնում է, որ Թիֆլիսի հասարակութիւնը ամէն կերպ աշակցէ եւր նոր առաջնորդին իւր հանը պաշտօնը կատարելու ժամանակ: Եթէ նա, հասարակութիւնը, այդ չի անել, եթէ նա անտարեի կը գտնուի դէպի ամէն եկեղեցական գործերը կամ սովորական կուսանակ կը ցուցի և լուսն եւ սի բաժանուելով խռ չընդուներէ կը գուշակ գնէ, այս ժամանակ եթէ երկնքից հըեշտակ էլ գայ, նա էլ ոչինչ չէ կարող առաջացնել:

Սպանդար Սպանդար:

«Մեղու Հայաստանի» 1883 թ. № 17.

<sup>1)</sup> և <sup>2)</sup>. Այս հէնց այդ հանգամանքն է, որ աւելի կը շիռ ու նշանակութիւն ունի:

Զարհուրնի ճշմարտութիւնը վրէժինդիրի աչքերով զալիս է ժամանակի թեւի վերայ և կարդում սրտերի խորքում.—Նորա սարսափելի ջանը վերջապէս բաւարարում է այն անդունդը, որտեղ անպատուհասութեան մէջ ծածկուած է մողը:

Վաշուր.

Գանք այժմ կարեոր կետին: Իսկ արդ կէտը մի այնպիսի անտանելի կէտ է, որին միայն կըքերի բոլոր լեգէօնը ժողովելով կարող է մօտենալ պ. Սպանդարեանցը. ուստի և ամէն օր նորանոր խոցոտիչ խօսքեր է հնարում, որպէս զի առաւօտը կանուխ ուղարկէ իրանց հասցէին: Եւ ապա, հազիւ թէ իւր թունաւոր խօսքերը թղթի վերալ մարմնացած տեսնելով, մի առանձին հաճոյք ու ախորժանք է զգում. կըքերի ծփծըփուն ալիքներն էլ իջնում են և մի երկու օրով մի անորոշ դիրք են ստանում: Ա՛խ, կըքեր, կըքեր, որչափ ընդունակ էք մարդու բանաստեղծական աւիւն ընձեռելու: (Այս խօսքերը ինձ են վերաբերում):

Սակայն ասելիքս առաւել պարզելու համար թերթենք նոր Դարի համարները. և ինչ ենք տեսնում: Անվրդով թերթերի վերայ ընկած մի կայծ, որ հետզհետէ մեծանալով բորբոքում է ու աստիճանաբար տաքացնում է ամբողջ թերթը, և յանկարծ երևում է բոցի առաջին լեզուն՝ հրդեհի առաջին նշանը: Կայծի նախապատրաստութիւնը, ի հարկէ, նորա գո-

յացումից շատ առաջ էր տեսնուած. բորբոքումը վաղուց գոյութիւն ունէր հրաբխալին լերան խորքումը: Եւ, որովհետեւ ոչ մի հրաբխալին արտահոսութիւն առանց նախընթաց շարժման, կիզման ու բորբոքման նշանների չէ լինում, ուստի և տեսնենք ինչ է ասում դորա առիթով նոր Դարի № 176ը:

Սլդտեղ միամիտ ընթերցողը սառնութեամբ կարդում է Տփկսի Աբաս-աբագեան հրապարակում, գետնի տակից դուրս հանուած մարդկալին գանկերի մասին նորա կարեկցութիւնը շարժող տխուր լուրը. և զարմացմամբ առաջին անգամը նկատում է մի անախորժ ակնարկութիւն՝ արուած Վրաստանի և Խմերեթի թեմի առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսի մասին: Հրաբուխի խորքերում իւրլթիւրլթացող վառուն նկւթերի բորբոքմանը անտեղեակ ընթերցողը, ի հարկէ, միայն ցաւում է աշխարհիս անտերութեան վերայ, զալիանում է տեղական հոգեւոր իշխանութեան դսրովելի անտարբերութեան վերայ, հիանում է թերթի միւս երեսում աներկւղ բարբառող Տէր Սիմոն Զմշկեանցի համարձակ քարոզի վերայ և ուրախանում է նորա կողմից՝ առաջնորդարանի պարսպից գաւիթը նետած քարերի վերայ: Մի քան միայն անյայտ է մնում նորան. այն է՝ որ այդ բոլորը արուած է այնտեղ բնակող Մեծի սիրտը խոցելու և նորա հասցէին ի լուր ամենեցուն ուղարկելու «Հետաքրքիր էր իմանալ տեղւոյս առաջնորդի անհրաժեշտ դատավարությունը» յուղիչ խօսքերը:

Սակայն, որպէս զի հարուածը զգալի լինի, բարեմիտ և ազգի բարելաւութեան նախանձախնդիր խմբագրապետը մտածում է այս առաջին անգամնեեթ երեք կողմից ոմքակոծել առաջնորդարանի—գաւիթը: Եւ ահա նոյն համարի լուրերի մէջ հանդէս է իջնում մի տիրացու, իւր ե-

տեղ ունենալով մի պաշտպան, որի փափուկ սիրոը մինչև խորը խոցուած է «քմահաճութեան առաջը չխոնարհող՝ Տփղիսի տիբացուներից ամենաարժանաւորի» վատթարացած վեճակը տեսնելով։ Եւ այդպէս, տիբացու, քահանայ և խմբագիր միացած գործում են «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի», գործում են ի սէր ազգի և ի պայծառութիւն Եկեղեցւոյ։ Բայց առաջնորդի անհոգութեան մասին տրտունջ բարձրացնող խօսքերը մի որևէիցէ բան չեն ապացուցանում արդեօք. այն առաջնորդի, որի երկամեալ աշխատութիւնքը, —որնոց ներբողներ կարդալը իմ կողմից ալսածեղ անպատեհ է, և որոնց մասին եթէ մարդը լուի քարերը կ'աղաղակեն. — պարզ երևում են և ամէն տեսնող աչք իրանց վերալ հրապուրում։

Գիտեմ, չարամիտ մարդիկ խուլ ու մութ անկիւնները կ'ընկնեն ալդ աշխատութեանց վերալ մի ստուեր ձգելու համար նիւթեր գտնելու։ Սակայն, թող գիտենան նոքա, որ ճշմարտութիւնն ու լուսը վազ թէ ուշ յաղթող կը հանդիսանան — ոչ թէ կրքերի, այլ ստութեան ու խաւարի վերալ։ Իսկ կրքերը հրաբխալին բերանից արտավիժուած լաւալի ծանրութեամբ կարող են առաջ գնալ, կործանելով ու ուղնչացնելով իրանց ճանապարհին հանդիպող արգելքները։ Բայց դա միայն անվայել միջոցներով վաստակած լաղթութիւնը կը լինէ կրքերի կողմից։ Ուրիշ ոչինչ։

Բանանք ալժմ նոյն լրագրի № 179ը. Ի Տէր հանդուցեալ ներսէս պատրիարքի հոգեհանգստի առթիւ Արիստակէս եպիսկոպոսի խօսած դամբանականը մի նոր միջոց է տալիս պ. Սպանդարեանցին լուրերից առաջինում նոր նետեր ուղարկելու դէպի առաջնորդարանի պատերը, Սըբագան Արիստակեսի քարոզը «սրտառուչ, հոգելից ու իմաստալից» չհամարելով...

Ես Ս. Արիստակեսին քարոզելու անընդունակ համարողներից չեմ, և ոչ էլ նորան մի պերճախօս ատենաբան համարող։ Սակայն այդ հանդամանքը չէ արգելում ինձ նորան մի տրամաբանօրէն, յարմարաւոր, իրական ու իմաստալից մտքերի քարոզիչ ճանաչելու։ Մանաւանդ թէ չպէտք է մոռանալ, որ մեր դարը առաւել մտքերի դար է, քան թէ բառերի ու ձևերի. և ես առաւել լաւ եմ համարում անպաճուծ, բայց իմաստալից քարոզները, քան թէ ճըբճըռան ու բումբիւններ արձակող՝ «օխտը հատիկ, մէջը փուչ» քարոզները։

Խօսք չկայ, առաւել ախորժ և նպատակայարմար կը լինէր, եթէ իմաստալից խօսքերը մեր մտքերը լուսաւորելիս մեր սրտի լարեն էլ թըբթըռեցնէին։ Սակայն ով է մեր մէջ ամէն բարեմասնութիւններով զարդարուած։ Ի՞նչպէս է խօսել նոյն խոկ մեր հոչակաւոր քարոզիչ սրբազն նորէնը՝ այն էլ համբաւաւոր պատրիարքի դիակի վերայ։ Գոնէ «Մեղուի» (№ 87) թղթակցի սաելով, նա, որից շատ բան էր սպասւում, աւելի սառն է խօսել։ Եւ վերջապէս, մէթէ առաջնորդ սաելով անպատճառ պէտք է մի ամենիմաստ, պերճախօս ու անսխալական եպիսկոպոս հասկանալ։ Ի՞նչո՞ւ չէք հաշտում նորանում էլ մի որկիցէ թերութիւն ենթադրելու գաղափարի հետ։

Բայց չէ. Նոր Պարի խմբագրապետին մի նոր առիթ էր հարկաւոր. և այդ առիթը նա գտաւ կամ առիթը իրան գտաւ առաջնորդի քարոզի մէջ։ Երևակայում եմ, ի՞նչ դիրք կը բռնէր պ. Սպանդարեանցը, եթէ նորա յարաբերութիւնը առաջնորդի հետ... Բայց ի՞նչ եմ ասում. նա մեր խմբագրապետներից ամենաազնիւը և ճշմարտութեան, անկեղծութեան ու անաշառութեան միակ մարտիրոսը լինելով, գըլում կը պատուիր ու մազաշափ անդամ չէր դուրս գալ ճշմարտութեան ճանապարհից։

Թերթենք ալժմ նոր Դարի № 180ը: —Պ. Սպանդարեանցը այս համարում խմբագրական ծանօթութեան մէջ է հանդէս գալիս: Յիշեալ տիրացուի պաշտպանութեան դէմ խօսող պ. Գ. Տ. Յ. ի հետևեալ խօսքերին «Ի՞նչ մի անձնական հաշիւ կարող է ունենալ առաջնորդը մի որևէ տիրացուի... հետ...» խմբագրութիւնը հետևեալ ծանօթութիւնն է դնում. «...միւնոյնը կարելի է ասել և ս. Սինոդի վերաբերութեամբ»: Տարբերութիւն չկայ արդեօք այդ երկու խօսքերի մէջ: Միթէ ս. Սինոդը մի առաջնորդի և մի եպիսկոպոս մի քահանակի հետ առաւել անձնական հաշիւ չի ունենայ, քան թէ մի առաջնորդ մի որևիցէ տիրացուի հետ: Չէ սխալում արդեօք պ. Սպանդարեանցը, Ո՞վ ում հետ առաւել հաշիւ կարող է ունենալ. թեմական վերատեսուչը հոգաբարձութեան ու տեսչի հետ, թէ մի որևիցէ դպրոցի ծառայի հետ:

Նոյն համարի Սղնախի թղթակցութեան մէջ ասուած է, որ «Առաջնորդի (Սրբատակէս եպիսկոպոսի) անունով 200 անձանց ստորագրութեամբ մի խնդրագիր է կազմուել, որով խնդրում են մի երեցփոխի հեռացնել պաշտօնից և նորա տեղը մի ուրիշին նշանակել»: Դորան խմբագրութիւնը հետևեալ ծանօթութիւնն է դնում. «Եկեղեցին ժողովրդին է. ինչու Ես ինդրում, որ մի ուրիշը «նշանակուի», քանի որ «ընտրելու» իրաւունք ունին»:

Այս ծանօթութեան մէջ արդեօք պարզ չէ փայլում խմբագրապետի կիրքը — իւր սեութեամբ: Նախ՝ ի՞նչ հարկաւորութիւն կար յիշեալ խօսքերին ծանօթութիւն դնելու. և երկրորդ՝ ինչից գրգուած, խմբագրութիւնը չէ ցանկանում, որ ժողովուրդը ինդրէ՝ առաջնորդին: Վերջապէս հազար էլ որ ժողովուրդը ընտրելու իրաւունք ունենայ, չէ որ դարձեալ օրինական ճանապարհով պէտք է ինդրէ առաջ-

նորդին, որ սա վաւերացնէ նորա ընտրութիւնը. չէ որ խնդրելն էլ հասարակութեան կողմից մի կարգապահութիւն է և մի քաղաքավարութիւն: Եւ ինքը խմբագրութիւնն արդեօք ի՞նչ վնաս, ի՞նչ վատ կողմնէ գտնում նորա խընդրելու մէջ:

Ե՞ն, ի՞նչ էք ասում. խմբագրութիւնն ինքն էլ լաւ գիտէ, որ այդ ասելու, բերանից դուրս թողնելու խօսք չէ. և թանաքը իսկոյն պէտք է չորանայ, երբ գրիչը մտադրուում է մտքի այդպիսի սե ու տգեղ կողմերը թղթին յանձնել: Բայց ի՞նչ անես, որ...

Տեսնենք № 183ը: —Այդտեղ մի առաջնորդողի մէջ խօսելով եկեղեցու կարգապահութեան մասին, ահա ի՞նչ է ասում պ. խմբագրապետը. «Առաջնորդը (իմա Սրբատակէս եպիսկոպոսը) երբ տեսնում է, որ իւր վճիռը աւելի օրինական, աւելի արդար է և ինքը իրաւունք ունի գժգոհ լինելու ս. Սինոդի վճռից, այն ժամանակ առ պէտք է իսկոյն հրաժարութիւնը իւր պաշտօնից, որքան էլ որ տաք և դուրեկան լինէր այդ պաշտօնը: Այդ է պահանջում — կարգապահութիւնը»:

Եւ ես ապշած եմ մնացել այն բանի մասին, թէ ի՞նչպէս Սրբազնը մինչև օրս շարունակում է իւր տաք ու գուրեկան պաշտօնը: Զարմանալի է, թէ որչափ մեծ համբերութիւն է ունեցել նա, որ իւր կարգադրութիւնը յարդուած չտեսնելուց յետոյ, իսկոյն և չէ հրամակել կառք պատրաստել Տփղիսից գուրս գնալու:

Տեսաք, ընթերցող, թէ ի՞նչպիսի վրժմունքի համար էր կատարում այն խըլթխըլթոցը հրաբուխի ինորքում: Տեսաք, ի՞նչ հարուածների համար էին նետւում նախընթաց քարերը: Երևակայում եմ: Ի՞նչ գեղեցիկ օր կը լինէր պ. Սպանդարեանցի համար, և ի՞նչպէս հանգիստ շունչ

կ'առներ նա, երբ լոէր որ Արիստակէս եպիսկոպոսը արդէն դուրս է գնացել Վրաստանի և իմերեթի թեմի սահմանից:

Բայց այդ դեռ նչինչ: Բանանք № 187ը: —Պ. Սպանդարեանցը պարզ էլ գրեց, որ Արիստակէս եպիսկոպոսը պէտք է Հրաժարուէր իւր պաշտօնից: Սակայն ի մեծ զարմացումն նորին, առաջնորդը տակաւին վարում է իւր պաշտօնը: Է՛հ, վնաս չունի. դէպէք էլի կը բերի նորամասին խօսելու:

Եւ ահա, իշխեալ համարի լուրերի բաժնում կարդացում է որ Շամախուոյ թեմի կառավարիչ և Թաղէսոս եպիսկոպոսը արդէն հրամանագրել է ընտրել Դուքաւում երկու երեսփոխան՝ առաջիկայ Յունուարի 17 ին Շամախի ուղարկելու, այնտեղ կաթողիկոսական ընտրութեան համար երկու թեմական պատգամաւորի ընտրութեանը ձեռնարկելու: Նոր Դարի խմբագրութիւնը դպրոն դնում է հետեւալ ծանօթութիւնը. «Զարմանալիք է. Շամախու թեմում արդէն ընտրութիւնների են ձեռնարկում. իսկ այստեղ (Տփղիսում) մեզ ոչինչ չեն լայտնում»:

Տեսաք, թէ ի՞նչ երևելի քան է պատահել, Շամախի ում արդէն շիլափլաւը կերան, ամաններն են լուանում, իսկ Տփղիսում...Այս աստիճանի էլ անհօգութիւն ու անտարերութիւն: Մի խօսքով, էլի հազար փառք Աստծոն, որ մեր խմբագրապետները դիմանում են, թէ չէ, եթէ մի ուրիշ լուսաւոր երկում լինեին ուղարահելիս այս սարսափելի անցքերը, ուզգակի կը հրաժարեցնէին առաջնորդին:

Բայց մեր շրջանկատ խմբագրապետը չի էլ իմացել, որ մինչդեռ Շամախու առաջնորդը Դուքայի աւագ քահանակին է Հրամանագրել, Տփղիսում արդէն Արիստակէս

եպիսկոպոսի հրաժարապետ շրջաներաշահներն եին բաժանում եկեղեցիներին: Է՛հ, երբ մարդ լաւը լսելու համար ականջները խցում է, շրջաբերական չէ՝ թէկուզ կոնդակներ ու հրովարտակներ հրատարակուեն՝ չի լսի...

Շարունակենք թէրթել Նոր Դարի № 189ը: —Այստեղ արդէն զորս դու պատուիրեցեր. Հրաբուխը գործում է անվաստակելի կերպով: Կարդացէք Հետեւեալ լուրը. «Կրօնական պատկառելի ժողովը (Կ. Պոլսի)...կաթողիկոսուհան ընտրելիութեան ցուցակում...նշանակել էր մի անլայտ և աննշան (միս, որչափ ժրատ է պ. Ս.ը ածականների կողմից) հողեղուականի անունը...»: Նուռ տուեք թէրթը. «...որի վերալ Պետերբուրգից մինչև Սպահան (ուհ, այդչափ տարածութեան մէջ) Հայերի ոչ թէ մեծամասնութիւնը՝ այլ փոքրամասնութիւնն էլ չէ մտածել»:

Է՛հ, այդ էլ մութը խօսքեր են. մվ գիտէ, 1000ից 999ը Հազիւ հասկանան. մի փոքր պարզ պէտք է խօսել. Թարբիշեան փողերը պէտք է հնչեցնել Սպահանից մինչև Պետերբուրգ: Ս.Ի. Էլ կը լինի. Երկու վերշոկ ցած դնացէք և կարդացէք. «աւագը թէքինը Ժողովրդեան դ հասը կամենաւմ է որ թ առնչէ լինի մեր թեմի առաջնորդը: (Ո՞րչափ քաղաքավարի է խմբագրապետը. նա կարող էր ասել «...կառնաւալ է որ Սրբակէս եպիսկոպոսը չլինի մեր թեմի առաջնորդը», բայց ոչ. Տալաւ գիտէ, որ երբ լուսաւորեալ մարդիկ մէկի ուրիմայութեամբ չեն ուզում խօսել, «մեզ մենակ թողէք», ասում են. չեն ասում «Հեռացէք»:) Սահամատուի (ոլազէս վի ոչ ոք չկասկածի): Բայց թէ ինչու այդպէս է, այդ մասին չենք խօսում»: Ուզում է ասել «Դորա ժամանակն էլ կը գալ»:

Լաւ հասկացաք ուրեմն, թէ քանը ինչումն է: Տփղիսի Հայ հասարակութեան մի մասը Սրբակէս եպիսկոպոսին

առաջնորդ չէ ուզում։ Քաղաքներ, գիւղեր, ամենքդ լաւ իմացէք. պ. Սպանդարեանցի բոլոր հենակետներն այդ էր։ Սխար լանկարծ հո չի ասուի. մի քիչ էլ քաղաքավարի պէտք է շարժուի մարդ։

Եւ ինչ երևելի բան ասաց է։ Արդեօք ինչ առաջնորդ պէտք է լինի, որին քաղաքի անողական հասարակութիւնը համակը. ո՞ր առաջնորդը իրան հակառակորդ չէ ունեցել քաղաքիս հայ հասարակութեան մե հասցե։ Ցոյց տուէք, ո՞րն է այն շնորհալի, ամէն բարեմասնութիւններով օժտուած եպիսկոպոսը, որին ամբողջ Տփղիսը, առանց բացառութեան պէտք է համակը ու պաշտի։ Եւ դեռ խմբագիր էլ են այդպէս դատողները։

Ես հոգեբան չլինելով, կարող էի մօտաւորապէս մարդարէանալ, որ եթէ հնարաւոր լինէր, պ. Սպանդարեանցը այսուհետև միայն առաջնորդական վրդովիչ հարցով կը զբաղուէր՝ մի կերպով իւր վսեմ նպատակն իրագործելու համար։ Սակայն, որովհետև առ այժմ 1885 թուականի բաժանորդագրական հարցը տագնապի մէջ է, և առաջներս էլ կաթողիկոսական ընտրութեան խնդիր կայ, կամայ ակամայ Ս. Արքստակեսի անձնաւորութիւնը մոռացութեան կը տրուի, — գո՞նէ առ այժմ։

Ընթերցողին է մնում այժմ մտածել, թէ ինչպիսի անձինք են զեկավարում մեր հասարակութիւններին, այս ու այն թերթի գլուխն անցնելով. և ինչ աստիճանի՝ ճշմարիտ եղելութիւնքը խեղաթիւրելու միտում և ընդունակութիւն ունեցողներ են հանդիպում խմբագրական նուիրական ապարիզում։ Ցաւալի է։

## Գ. «ՆՈՐ ԴԱՐԻ»

**Խմբագրութեան մոռացած ծանօթութիւնները.**

Եւ դու, պատանի, քաջակերելով քեզ ասացինք, որ ճայնդ անուշ է. բայց մի՛թէ ինքդ զիտէիր, որ շատ տաղեր գեն եւս չես սովորած. ինչո՞ւ յանկարծ կարծեցիր, որ զու ազգային միակ գուսանն ես...

Ուսպայէլ Պատշաճութեան

«Նոր Դար» 1884 թ. № 57.

Դրուածքիս սկզբումն ասացի, որ «Նոր Դարի» նորութիւնը ըստ իս կալանում է միայն նորանում, որ նա չափու սահման չէ ճանաչում և անզուսպ է։ Իբրև յաւելուած, այստեղ աւելորդ չեմ համարում ասել, որ այդ թերթը գարձեալ մի բանով զանազանուում է մեր միւս թերթերից։ Դա խմբագրութեան սաստիկ սէրն է գէպի ծանօթութիւնները, որոնց մասին խմբագրապետը գովասանք էլ կարդաց — իւր թերթում։

Ծանօթութիւն գրել հարկը պահանջած տեղում, ինչպէս անում են առհասարակ մեր և օտար թերթերը, — հասկանալի է։ Բայց ինչ կ'ասէք, երբ տեսնում էք մի թերթ, որի խմբագրութիւնը կամ խմբագրապետը այն աստիճանի երան սրախօս (կարդա՝ «զրախօս») է համարում և այն

աստիճանի սկրահազուած է (սիրոլ էութիւնը բացատրող խմբագրապետից ի՞նչ զարմանալու բան է. № 25) իւր ծանօթութեանց վերալ, որ կարծես վճռել է ոչ մի համար դուրս չթողնել առանց ծանօթութեան։ Ո՞վ չգիտէ, որ «Նոր Դարի» զարդը, նորա ազն ու համեմունքը խմբագրութեան ծանօթութիւններն են։ Եւ ի՞նչ էք կարծում։ Նորա ընթերցողները առանց խմբագրական ծանօթութեան «թիքայ» չեն կարողանում կուլ տալ։

Ի՞նչ էք ասում. շատ զարգացնող բան է ծանօթութիւնը։ Ամբողջ Եւրոպան ու Ամերիկան ինչպէն են պարտական իրանց յառաջադիմութեամբը, եթէ ոչ միայն և միայն խմբագրական ծանօթութեանցը։ Երկաթուղի ասես, շոգենաւ ասես, հեռազեր, հեռախօս, մի խոռով ամէն բան, ամէն լուսաւորութիւն խմբագրական ծանօթութեանց շընորհիւ է առաջ դալիս։ Հետեւապէս, մեր ազգի լուսաւորութեան միակ յօլսն էլ, եթէ լաւ, նրբազննին քննութեան ենթարկեք, — միայնուեթ «Նոր Դարի» խմբագրական պնդստերիւր ծանօթութեանց մէջ պէտք է որպանի։

Ա.Հա այս է պատճառը. որ կամենալով ծանօթութեանց սիրահար խմբագրապետին ո՞ի գուզնաքեալ ծառալութիւն մատուցանել, ես անտեղի չեմ համարում գնել այստեղ մը էր ի՞ւրա այլպիսի ծանօթութիւն, որոնք վրիպել են բազմազբաղ խմբագրապետի գրչից։ Դորա համար կարդ պահպանենք։

Բանանք «Նոր Դարի» № 10.— Լուրերի մէջ ասուած է. «Զեր լրագիրը վաճառական դասի համար շուտով մի անհրաժեշտ պահանջ կը դառնալ»։

Ծանօթ. Խօնք. — Դովիտասնքներ լսելու համար մեր ականջներն իսպատ վակենք (Բայց գրեցէք. շողոքորթութեւնը ուժն ախորժելի չէ։)

№ 11.— Լուրերի մէջ. — «...մենք խոստացել 1892 անը 7/1 ԴԱՆՐԱԿՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԿՈՐ ԴԱՎԱՎԱՐԱԿԵԼ ԿԱՐԱՍՏԱՄԱՆ ԿԱՐ ՀԱՅՐԱ ՀԻՆԴ անգամ միայն, ինչպէս առաջին դասընթացիւն է։ Մենք այգափիսի խոսդմունք չենք արել...»։

Ծ. Խ. — Բայց ճշմարտութիւնը խոստովանելու համար պէտք է ասենք, որ, այս, մի անգամ «Մեղուին մէջ խիստ էինք յարձակում այն համգամանքի մասին, որ «Մըշակը» իրան ամենօրեալ թերթ էր անուանում, բայց իսկապէս գրեթէ միայն չօրս անգամ էր հրատարակում։ Մենք նոր ենք հասկանում, որ մեզ շըջապատող համգամանքների մէջ, հեռութից մեծ մեծ բրդելը հեշտ է։ Բայց ի՞նչ անենք. խոսքի տակ չմնալու համար մի բան պէտք է ասել թէ ոչ նոյն համար. — Պատասխաններում։

Թիւրքիա. — Նշանակայցէք. ամբողջ գովանական լըլակութեւնը այս անգամ գուրս ենք բերում իբրև պատահան։ Եւ այդպէս վարուելու համար ունենք մեր պատճառը։ Դուցէ գուրք հարցնէք թէ ո՞ն է։ Նոյն իսկ Աւետարանի խոսքը, որ ասում է «Եւ զոր լսէք լունկանք, քարոզեցէք ի վերայ տանեաց»։

... Դուք ձեր առաջին թղթակցութեան մէջ գրում էք. «Կարդացի հաճութեամբ Ձեր նոր հրատարակելի օրագրին Ծրագիրը, որ խմբագրական ծանր պաշտօնին պարտադրութեանց արդէն հմուտ (լսեցէք), ազգին պիտուից տեղեակ (լաւ լսեցէք. ամէն խմբագրապետի չի կարելի տալ այդ գովասանքը) և անոր զարդացման նոր զարկ տալու վափառ գող անձի գործ է։ (Այս, այս. լրագիրը նոր, անունը նոր, զարկն էլ նոր, գրեմփոցն էլ նոր. — ի հարկէ, Դարբադրութիւն կազմելը ամէն խմբագրապետի գործ չէ). Ազգին համար նոր տարուն առթիւ «Նոր Դարէն» աւելի գեղեցիկ մի

պարզեցածէր բարնակը և լինել: — (Ա. ՓՓերիմ, գրիչ չդ սիրեմ,  
գրնդ): «Մերանորանոր պիտուից զգալի մի արտայատու-  
թիւնն է այն (Քրան էլ խօսք վական), կամահանմ, որ ունե-  
նալով բոլորանոսիմայտկան և բարսական (Ենչ պատել  
կ'ուղէ). պարմաններն, որով մի թերթի լարդն և կարևորու-  
թիւնը կը բարձրանանք կեցցէք շողոքորթներ — առանց  
չեղ էլ ոչինչ համ բաշկայ), պիտի շարաւնակէք անընդհատ  
բարտեռութեամբ (բանս, բաժանութիւնների էլ հարցրէք ի:  
Ենչ նոր Թարախոս չհրատարակեցի. առ դարր լոյս ձեցի  
ինձ համարը մարդկէ. ամէն համարում կրկնում ես, որ  
թերթը ձրիչէ տալում. զնումն ես ասում...) և ի գործ  
պիտի դնէք Ձեր ծրագիրն. . .»:

Տ. Խաչական անվերջ գովանանքները թէսլէտ Պատաս-  
խանեցի բաժնում տպելուն լրան չենք, բայց մենք էլ մարդ-  
ենք, չէն մարդ, որին կը քիչքի. տակը մի ջերմ ու անկեղծ  
նիրար էլ բացակառութեան համեստութիւնից էլ մարդ  
ինտակի կորչում է. «Մէկուն» քեզ օրինակ:  
Խ. № 12ը Հաշիմերի ժողովադարանութեանցան մասին  
երեք սիրն քեզովոր առաջնորդոր է ալտրունակում չափա-  
զրապեար հրաւիրում է ամէն բայտարարութիւն ու հաշի-  
տմէլուան համար վողի վճարել: Ենչ սառ դէն զար...  
միջածոյ իշկաթէտ այս համարի առաջնորդողի իմաստը  
կարելի էր լուրերի բաժնում նարաւալաւել, բայց ինչ  
անէք որովհետիւ յալուրարութեանց համար փող վճարե-  
լու հարցն էլ լրաւական զարգացնող հարց է, պէտք է  
տակով որդողութեանցի տեղի բաշնեց: Մեր հալերը դեռ  
զնու պիտիսի առաջնորդողներ պէտք է մարսեն, մինչև  
որ արժանի կացուցանեն իրանց անձը օրինաւոր առաջնոր-  
դուիներ կարդալիւ: Վերջապէտապական է առաջնորդում  
դա միւնք իշտուածներին առաջներն ընկած քշում է, էլ ի...»

№ 20. — Ս. Ամարից սկած՝ մի բաւական և ըկտան  
շարք առաջնորդողների կրում է իւր ճակատին և Անձեղ  
մտածմունքներ» վերտառութիւնը: Թէպէտ դոքան, աննշան  
բացառութեամբ, իսկապէս «Անմիտ մտածմունքներ» էին:  
բայց Ենչ պէտք է անել, երբ մամբադրապետը դրել է ան-  
ռաջներդ իրեւ առաջնորդող մտքեր: փող էք սուել,  
պէտք է կարգագ: Մեր գարը անտեսական դար: Էջ պատ-

ծ. Խ. — Ներկայացնելով մեր ընթերցողներին Շիրար  
եակեց շարաւած ծրոծուան, ցիր ու ցան, անկապ ու  
անիսորհուրդ մտքեր, որոնք մեր թերթի մէջ փոքր տեղ  
չեն բռնի, և որ կարելի էր երկու խօսքով արտադաշտել, —  
խնդրում ենք, որ ընդունեն նոցա իրեւ իմաստալից առաջ-  
նորդողներ: Վերջապէս ճաշակի բան է: Ամէն մարդ իւր  
կերպն ունի խօսելու մեց:

№ 23. — Պոյն արդ «Անմեղ մտածմունքների» մէջ պ.  
խմբագրապետն ասում է «Ահա մարդիկ, որանք որքան էլ  
լիմար են, այսքան էլ ստել... սիրում են... մանաւանդ երբ  
իրենց ուզած մարդուն կարող են չեխութել, անուտանուին  
շնորհել»:

Ծ. Խ. — Արդ խօսքերը մեզ ցեն վերաբերում: Ուզած  
մարդուն ցեխստելու ու անուանարկելը մեզ համար նոյն-  
քան ստոր ու զգուելի գործ է, որքան անբովանդակ են  
մեր առաջնորդող լոգուածների մեծ մասը:

№ 25. — «Անմեղ մտածմունքների» մէջ խօսքը ներ  
մասին է: Եւ պ. խմբագրապետն ասում է՝ «Սիրեցէք,  
քանի ապրում էք, որքանի կարգը էք ու կեան քը մարդ»:  
Էջ գոյն ուստի իւր մեջ գոյն ուստի նոյնաւանդ իւ-

ծ. Խ. — Տեսնում էք, ինչ գեղեցիկ մտքեր էնարտա-  
յալում մեր թերթը: Մինչ պէտքեցի մտքեր էնարտա-

լաւ բան է. հարկաւոր է սիրել: Ա՛շխարհք է. այդպէս  
էլ կը պատահի:

№ 27.—Սռաջին լուր,—«Այժմ ես (մի տփղիսցի) հրապարակաւ խայտնում եմ, որ բացի իմ ընտրած «իրել» տէր Ղազարոս քահանալից, ոչ մի քահանալ չեմ ընդունում իմ տանը իբրև տան քահանալ: Արդեօք սա իմ իրաւունքը չէ»:

Ծ. Խ.—Ահա թէ ինչ հետեւանք ունեցան մեր՝ Սիրոյ մասին գրած առաջնորդողները: Երևակայեցէք. անանջատելի սիրով կապել են միմեանց հետ ծխական ու ծխատէր: Տէր Աստուած, ինչե՞ր չի կարող անել մի որևէից անմշշ հոգեցնունք...

№ 41.—Սռաջին լուր,—«Ենորհակալութեամբ ստացանք Թիֆլիսի առաջնորդական յանձնարարութեանց լանձնաժողովից նրա կազմած «Հրահանգը» Թիֆլիսի և նրա թեմի եկեղեցիների բարեկարգիչ վերատեսուշների համար...»:

Ծ. Խ.—Մարդու սիրտ է փառաւորւում, երբ տեսնում է ս. Արիստակէս եպիսկոպոսի տոկուն աշխատութիւնքը իւր թեմի եկեղեցական բարեկարգութեանց վերաբերութեամբ: Յանկալի էր, որ մեր միւս թեմերն էլ հետեւին Սրբազնի եկեղեցաշն ընթացքին: Մի այդպիսի փորձ, ճշմարիտը խոստովանելով, մեծ պատիւ է նաև Յանձնաժողովի արժանապատիւ անդամներին: Այս հանդամանքը մեզ հաւաստիացնում է, որ օրեցօր աւելի լոյսեր ունենք մեր ընկած հոգեորականութիւնը վերականգնած տեսնելու: Կար ժամանակ, երբ տակաւին մենք անծանօթ լինելով Արիստակէս եպիսկոպոսին, «Մեղուի» մի համարում գրեցինք թէ՝ «Ո՞ր կողմը շուռ ենք գալիս» միմիայն լաւն ենք լսում նոր առաջնորդի մասին»: Եաւ ուրախ ենք, որ մենք սխալուած չենք եղել:

№ 112.—Մի լրի մէջ ասուած է, որ Ս. Արիստակէսը Աղբուլազում և Դաղեթում ուսումնարան բաց անելու համար ժողովրդոցը առաջարկութիւն է արել, որ ամենայն սիրով ընդունուել է և ժողովրդականք ձեռնարկել են ապահովութեան համար հանգանակութիւն անելուն:

Ծ. Խ.—Գովելի է Սրբազնի անխոնջ գործունէութիւնը յօգուտ եկեղեցւոյ և դպրոցի: Դորանով առաջնորդը սերտ կապեր է հաստատում եկեղեցւոյ, դպրոցի և ժողովրդի մէջ, որ գլխաւոր առհաւատչեան է մեր գործերի յառաջադիմութեան:

№ 157 և 184.—Զեկուցումն.—«Այս համարում առաջնորդողը մնաց միւս անդամին. չկարողացանք հրատարակել»:

Ծ. Խ.—Թող ներեն մեզ մեր ընթերցողները, եթէ մենք ստիպւած ենք զրկել նոցա մեր առաջնորդողները կարդալու անվախճան հաճուքից: Մեզ շատ լաւ յայտնի է, որ առանց մեր առաջնորդողի՝ մեր ընթերցողների համար կեանքը կեանք չէ: Բայց նոքա խօ լաւ գիտեն, որ «Համբերութիւնը կեանք է»:

№ 175.—Լուրերից երկրորդում ասուած է. «...մի քանի մարդիկ՝ իրենց առօրեալ փորձերով՝ շատ լաւ տեսանթէ... չարիքի առաջն առնելու գեղը... դպրոցն է: Եւ ահա այդ մարդիկ ձեռք զարկին առանց մի կոպէկ դրամագլուխ ունենալու սկզբում՝ Նամքոռեցւոյ եկեղեցւոյ գաւթում դպրոցի շինութեան... Վերոյիշեալ անձինքն են՝ Դրիգոր Ղարաբեօղեան, Յակոբ Մելիքեան և Կարապետ Քոչարեան՝ բժիշկ...»:

Ծ. Խ.—Բայց գուք մոռանում էք գլխաւոր անձի անունը: Ո՞վ էր, որ Հաւլաբարի ամբողջ հայ հասարակութիւնը մի կիւրակէ օր հրաւիրեց Նամքոռեցւոց Ս. Աստուածածնի եկեղեցին և հայրաբար լորդորեց նոցա՝ Հաւլաբարի մանկանց համար մի բարեկարգ դպրոց հիմնել: Ո՞վ էր, որ ս. պատարագից յետոյ հրաւիրեց խոնուած ժողովրդին ձեր լիշած նորակառոյց փառաւոր դպրոցի նախկին անշուք սենեակը և ընտրել տուեց ձեր լիշած հոգաբարձուներին: Ո՞վ

էր, որ քաղաքիս տիհեստաւորների աւագներին (առոտութաշի) հաւաքեց առաջնորդարան և Հրաւիրեց այդ գալրոցի կառուցման ծախքը հոգալու համար իրանց համարուեստների խմբերից (համքարներից) նուիրաբերութիւն հանդանակել, որի հետևանքը եղաւ ստորագրուած 400 ռուբլու չափ գումարը: Վերջապէս, ուշմ անուան վերաբ վստահանալով, քաղաքիս հասարակութիւնը տալիս էր իւր նուերները լիշեալ հոգաբարձուներին, եթէ ոչ այդ վիճ գործի դլուի կանգնող թեմիս առաջնորդ Ս. Արքուտակէս եաբակոսուի անուան վերայ: Կարելի՞ է միթէ այդպիսի նշանաւոր անուն մոռացութեան տալ:

Խնչակէս կարելի՞ է մոռանալ միւս երկու հոգաբարձուաց անսունները, որոնք իրանց կարողութեան չափ նպաստել են գալրոցի շինութեանը. այն է Համազասպ քահանաց Տովհաննիստանց և Սարգիս քահանաց Իգիթեանց: Կարծում ենք, որ ճշմարտութիւնը ուահանջում է անաշտու լինել ամենի վերաբերութեամբ: Գուցէ ձեր նպատակն այն է եղել, որ ցուց տաք թէ լիշեալ երեք յարգելիք անձինք անհամեմատ շատ են աշխատել, քան մեր ակնարկած երկու քահանաները: Սակ ուրիշ հարց է: Բայց մոռանալ նոցա, որոնք նոյնապէս ընարուել են և վարել հոգաբարձական պաշտօն, — դա մի փոքր ներելի չէ:

№ 188. — Քարձեալ մի թղթակցութեան մէջ Զայն ստորագրութեամբ մէկը նոյն նամքուեցոց դպրոցի մասին խօսելով գրում է. «Մեզուի նախընթաց համարում մի ոմն Պ. Ե. մի լուրի մէջ յայտնում է, որ «Նոր Քարը» այդ գործում զիմանը անձը մոռացել է: (1) և (2): Որպէս գործերի մօտիկ ծանօթ (3), թուլ տուշը, յարգու խմբագիր, արձանագրել ճշգրիտ իրաղութիւնը (4)... աեզիս առաջնորդը (Երջանկայիշատակ Եղենդեանցից՝ Ներսիսեան դպրոցին կտակած գումարից) չգիտենք ինչ հիման վերալ վեց հարիւր ուուբլի յատկացնում է նամքուեցոյ դպրոցին...» (5):

Ծ. Խ. 1. — Բայց դուք առաջ լաւ նայեցէք «Մեղսի» № 88-ի մէջ ձեր ակնարկած լրին: Ձեր ասուն «մի ոմնը» Պ. Ե. չէ: Այսպիսի դէպքերում խնդրում ենք մեր մէջ. թղթակիցներին, որ աչքները լաւ բաց անեն:

Ծ. Խ. 2. — Դորա մասին էլ կարդացէք 1883 թ. «Մեղսի» № 62-ում, մի առաջնորդովի հետեւեալ կտորը. «Թիֆլիսի նոր առաջնորդը (Արքաստակէս եպիսկոպոսը) իւր առաջնորդութեան կարծ ժամանակում յարուցել է այնպիսի խնդիրներ, որոնք եթէ մասամբ էլ յաջողութեամբ լուծուին, թէմի հայ ժողովարքի բարոյակէս և մտաւորապէս զարգանալուն և հոգեւորական դասի վերակենդանութեամնը մեծ գրաւականներ են...: Բարեկարգ եկեղեցին և բարեկարգ դպրոցը միացած կարող են ժողովարքին զարգացնել բարոյապէս և մտաւորապէս և եկող արգելքների դէմ միշտ յաղթութիւնը տանել: Սակ լու գիտէ նոր առաջնորդը և այդ պատճառով ձեռնարկել է եկեղեցու և դպրոցների բարեկարգութեանը... Աւելորդ է ասել, որ միջնակարգ և լաւ կառավարած դպրոց քաղաքի այդ (Զաւարար) մասում մի առանձին բարութիւն է: «Բարեգործական Ընկերութեան» Խորհրդին առաջնորդը նոյնպէս առաջարկել է բանալ մի ծխական դպրոց Թիֆլիսից կարուած հեռու նաւթլուղ թագում, ուր ծաւխը չքաւոր է և մանուկները դպրոցից զրբկուած օտարանում են և փշանում: Սակ ամենը ցուց է տալիս, որ մեր նոր առաջնորդը շինել, կառուցանել է ուղում»:

Սպանդար Սպանդարէան

Ծ. Խ. 3. — Դուք ինչից գիտէք, որ «Մեղսի» լրատուն գործերին հեռուեց է ծանօթ:

Ծ. Խ. 4. — Մեզ համար, այդուամենայնիւ, մութն է մնում այն հանգամանքը, թէ երկուսիցդ որն աւելի ճշգրիտ է արձանագրում: Մենք իրաւունք չունենք ձեզ հաւատալու, իսկ «Մեղսի» լրատունից հաւատալու:

Ծ. Խ. 5. — Դուք պիտք է լաւ դիտենաք, ուր ներսիսեան դպրոցի կարգադրութիւնները, մանաւանդ ըստ տընտեսկանին, միայնևեթ նորա հոգաբարձութիւնն է անում: Հետեապէս, այն էլ պիտք է իմանաք, որ առաջնորդը, ով ուզում է՝ լինի, ինքնազլուի, առանց հոգաբարձութեան համաձայնութեան չի կարող այդպիսի կարգա-

գրութիւն անել։ Պարզ բանէ, որ եթէ մի այդպիսի անօրինութիւն արուել է, Հոգաբարձութիւնն է արել. և ոչ առաջնորդը, թէպէտև այդ վերջինը հոգաբարձութեան նախագահը լինէր։ Այսպիսի ակները ճշմարտութիւններին տեղեակ չլինելուց յետոյ ինչպէս հաւատանք, որ ձեր արձանագրութիւնքը ճշգրիտ են։ Կը ինդրէինք մի փոքր շրջանկատ լինել։

ԽԾ.

## ՎԵՐՁԻՆ ԽՈՍՔ

Իմ գրած սակաւաթիւ ծանօթութիւններից բանիբում ընթերցողը շատ բան կարող է հասկանալ, ուստի ես շաբաւնակելու կարօտութիւն չեմ զգում, թէպէտև «Նոր Գարի» խրաքանչիւր երկու համարը չէ պահում որքանեւցէ նիւթ մատակարարել հետաքննին ընթեշցողին։

Սակայն խօսքերս վերջացնելուց առաջ հարկաւոր եմ համարում «Նոր Գարի» պ. խմբագրապետի ուշադրութիւնը հօսպերել հետեւալների վերայ։

ա) Կա թող գիտենայ, որ ես ամենենին միտք չեմ ունեցել այս գրուածքովս սրաշտապաննել Ս. Արևոտակիսս եպիսկոպոսին. որովհետեւ ես հաւասարապէս կը գտէի սոյն կերպով նաև, եթէ Վրաստանի և իներեթի թեմի առաջնորդը լինէս ովելից մը ուրիշը, իմ ցանկութիւնս էը ևէ միայն՝ ոև քօղը վեր առնել լուսապայծառ ձևագութեան երեսից։

բ) Մի ճշմարիտ խմբագրել վայել գերք բռնել ամէն հարցել վերաբերութեամբ։

գ) Անողոք թշնամի հանդիսանալ ամէն տեսակ անարդարութեան։

դ) Ամէն առաւօտ կը կնել Սադմաներդուի հետեւալ խօսքեր. «Դիք, տէք, պահապան բերանոյ իմոյ, և գուռն ամուր շրթանց իմ առաջնորդութիւնի մերս իմ բանիւ չարութեան»։

Գրեց  
ՄԻ ՀԱՅ ՄԱՐԴ:

Դօվուշու Կենտրոնական Գրադարան  
Տիգոր. Լ. Գ. ԿՐԱՄԱՐԵԿՈ, վե Թիֆլիս.

0  
26-70

07  
7-93



Дозволено Центральному Типографии. 6 Декабря 1884 го

0023046

2013 5710

«Ազգային գրադարան



NL0023046

